ի Հիզերայն և կարմիր գլուխն դարձաւ ի Սալմաստ։ Բայց առաջիկայն Աստուծոյ է յայտնի»։

Աւետարանիս գրել տուողն է խոջայ Դարման ի քաղաքն Ճոշ, որ է Սպահան, ի դուռն Ամենափրկիչ վանիցն Նոր-Ջուղայու։

Բ. Աւետարան Սաղիանի վանքինն, որ ունի այսպիսի յիշատակարան՝

«Փառք համագոյ Աստուածութեանն Հաւր և . . . . . Արդ գրեցաւ և ծաղկեցաւ սուրբ Աւետարանս յայլ և այլ գրչաց և ծաղկողաց յերկիրն Թիֆլիսոյ ձեռամբ Տէր Բարսեղ քահանային։ Եւ դարձեալ Յովհաննու գլուխի պակասն և ծաղկանց պակասն և գհամարներն և գյանկերն և ցրուացանկերն և զԺ խորանաց կարմիր գրերն և գլաճվարթով գրերըն, և զոսկի վարագով խորաններն և զյինանց Աւետարանաց ընթերցմանց փոխերաց գրերն և զամենայն պակասութիւնս Աւետարանիս, թերի և անթերի հանդերձ սրբագրերով և ստուգաբանելով եղեւ և կատարեցաւ այս ամենայն ձեռամբ ումեմն բանասիրի Սարգիս վարդապետի . . . ի թուականութեանս ՌՃԺԵ ամի, ի կաթուղիկոսութեան տանս Աղուանից սրբասնեալ Տեառն Պետրոսի և յառաջնորդութեան Տէր Բարսեղ եպիսկոպոսին»։

Գ. Աւետարան գրչեայ արծաթապատ երեսօք, ոսկեզօծ խաչելութեան պատկերաւ, գրեալ ի թղթի և զարդարեալ ոսկենկար զարդուք և պատկերօք. Յիշատակ Նոր-Ջուղայեցի պարոն Գերաքին և որդւոցն. թվ. ՌԳԴ. (1644), այսպիսի յիշատակարանաւ։

«Փառք միասնական համագոյ սուրբ Երրորդութեան . . . Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքս Ճոշ ի գիւղս ձուղա, Հայրապետութեան Հայոց Տեառն Փիլիպպոսի, և Առաջնորդութեան մերոյ գիւղիս՝ Խաչաբարձ և Քրիստոսի